## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Բազմաբնակարան շենքը չորս հարկանի քարե շինություն է: Պատերը երկայնական կրող են, միջհարկային ծածկը՝ հավաքովի ե/բ սալերից: Տանիքը կառուցված է փայտե կոնստրուկցիաներով, թեք լանջավոր է՝ որի ծածկույթը իրականացված է ասբոշիֆերից:

Ըստ տեղում կատարված ուսումնասիրության պարզվեց, որ տանիքի փայտե կոնստրուկցիաները հիմնականում գտնվում են անբավարար վիճակում: Ասբոշիֆերից և մետաղական հարթ թիթեղից ծածկույթը կավարամածի հետ միասին, ջրհորդանը տախտակի հետ միասին քայքայված են և ենթակա են փոխարինման:

Տվյալ նախագծով նախատեսվում է իրականացնել ք. Երևանի, Ավան վարչական շրջանի, Աճառյան փողոցի h.36/1 բազմաբնակարան շենքի թեք տանիքի հիմնանորոգում:

Մասնավորապես քանդել գոյություն ունեցող քայքայված տանիքածածկը՝ կավարամածի հետ միասին, ապամոնտաժել գոյություն ունեցող հնամաշ ջրահեռացման խողովակները և ջրհորդանները տախտակի հետ միասին: Ապամոնտաժել տանիքի փայտե կոնստրուկցիայի քայքայված և վնասված էլեմենտները և փոխարինել նոր փայտե կոնստրուկցիաներով: Իրականացնել նոր 0,55 մմ ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից ծածկույթ, նոր կավարամածով, կառուցել նոր ջրհորդան 0,55 հարթ ցինկապատ թիթեղով՝ նոր տախտակների վրա, փոխարինել հին ջրահեռացման խողովակները՝ նոր Փ160, L=11.7մ, ցինկ. թիթեղից խողովակներով: Իրականացնել փայտե էլեմենտների մշակում հրապաշտպանիչ և հականեխիչ նյութերով:

| N | ԱՆՎԱՆՈՒՄ | Թերթ |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ | ՃՇ-1 |
| 2 | Տանիքածածկի հատակագիծ, մասնագիր | ՃՇ-2 |
| 3 | Տանիքի կոնստրուկցիայի հատակագիծ, մասնագիր | ՃՇ-3 |
| 4 | Կտրվածք և հանգույցներ | ՃՇ-4 |
| 5 | Հանգույցներ | ՃՇ-5 |

Շինարարական նյութերին և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներ

Իրականացվող աշխատանքներում օգտագործվող շին.կոնստրուկցիաները և նյութերը պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ:

Վերանորոգման աշխատանքներն իրականացնելու համար պահանջվող լիցենզիաներ

Քաղաքացիական բնագավառում շինարարության իրականացում ըստ հետևյալ ոլորտների՝

1. Բնակելի , հասարակական և արտադրական:

Աշխատանքային ռեսուրսներ

1. Աշխղեկ ՝ Ինժեներ-շինարար «ԱՔՇ»,առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով:

Տեխնիկական միջոցներ

1. Ինքնաթափ ավտոմեքենա 1 հատ
2. Ավտոկռան 1 հատ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Տնօրեն | Ա. Առաքելյան | | . , Ավան Աճառյան փողոցի, h 36/1 բազմաբնակարան շենքի թեք տանիքի հիմնանորոգում | | | |
| Նախագծեց | Հ. Օհանյան | | Պայմանագիր՝ ԵՔ-ՊԸԱՇՁԲ-14/74-3 | էտապ | թերթ | թերթ |
| Ն.Գ.Ճ. | Հ. Օհանյան | | | ՃՇ | 1 | 5 |
| | | | Ընդհանուր տվյալներ | «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ | | |